ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության տնտեսական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության փորձագետ Կարինե Աբրահամյանի

Ես՝ Կարինե Աբրահամյանս, ՀՀ ֆինանսների նախարարության տնտեսական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2023 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված N 38 պայմանագրի համաձայն:

2023 թվականի հոկտեմբերի 12-ից մինչև 2024 թվականի ապրիլի 11-ը ներառյալ, աշխատանքային ծրագրի համաձայն, իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- էներգետիկայի, ճանապարհային տնտեսության և տրանսպորտի ոլորտների՝ արտաքին աղբյուրներից ներգրավված վարկային, դրամաշնորհային և ենթավարկային ծրագրերի միջոցառումների գծով ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման, ինչպես նաև առաջիկա տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակման ուղղությամբ աշխատանքների կազմակերպում, վերլուծությունների և կանխատեսումների իրականացում, բյուջետային ծրագրերի գնահատում:
- Բյուջետային գործընթացի շրջանակներում պետական կառավարման մարմիններից ստացված պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ներառյալ առաջիկա բյուջետային տարվա) բյուջետային ֆինանսավորման հայտերի վերլուծություն:
- ՀՀ պետական բյուջեով նախատեսվող ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումներով իրականացվող հատկացումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ պետական բյուջեով նախատեսված հատկացումների վերաբաշխումների կատարման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
- Վերլուծական փաստաթղթերի և հաշվետվությունների (այդ թվում՝ միջազգային ֆինանսական կառույցների կողմից ներկայացված) վերաբերյալ մասնագիտական կարծիքի ներկայացում:
- Միջազգային կազմակերպությունների, պետական կառավարման մարմինների, նախարարության այլ ստորաբաժանումների գրություններում բարձրացվող հարցերի, ինչպես նաև ստացված իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքների իրականացում:

ՀՀ ֆինանսների նախարարության տնտեսական
ծրագրերի բյուջետային գործընթացի
կազմակերպման վարչության փորձագետ Կարինե Աբրահամյան